Եղիշե Չարենց

Քո վարդարանը

Ի՜նչ է ուզում մատներից իմ տխուր ու մեղկ
Քո վարդարանը հիմա, երբ հեռու ես դու,
Որպես անցած կարոտի մոռացված մի երգ:

Եվ ինչո՞ւ եմ ես նստել իրիկվսա մեդին
Եվ ձեռքս առել հակինթե վարդարանը քո,
Երբ մտորում է հեռուն զանգերի հոգին
Իրիկնային մոխիրե ամպերի ներքո...

Ախ, թող հոգուս լազուրե դառնությունն աճի
Ու խտանա, մշուշի պես խոնավ ու թեն,
Որ ես ոչի՜նչ չտեսնեմ մշուշից բացի:

Սակայն զանգերը հեռուն մտորում են դեռ
Հետզհետե ծանրացող ամպերի ներքո
Ու երգում է մատներիս կարոտի երգեր
Հնամենի՜, հակինթե վարդարանը քո . . .